

## Ա. Խ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

(Ժարտարապետության դոկտոր)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵջ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՆԵՐԳԾԱԾ ԽԱՉԻ ՄՈՏԻՎԻ ՄԱՍԻՆ

Խաչի տեղը, դերն ու նշանակությունը Հայաստանի վաղմիջնադարյան ճարտարապետության մեջ լիովին հասկանալի են: Հայ ճարտարապետության զարգացման այդ ժամանակաշրջանում դժվար է պատկերացնել մի եկեղեցի, որի վրա բացակայեր այդ խորհրդանշանը: Խաչի ձկատմամբ երկյուղած վերաբերմունքը, ըստ երևույթին, ծնունդ է տվել նրա տեղադրման վայրի դավանաբանական մոտեցմանը և գեղարվեստական զարմանալի ճնիս ու բազմազան մենանաբանությանը՝ տվյալ դեպքում առանց փոփոխության պահպանով կանոնական ձևը: Բազմաթիվ դեպքում խաչի կոմպոզիցիայի գեղագիտական հիմքը ենթարկվել է խորհրդանշական սկզբունքին:

Մենք ենթադրում ենք, որ այդ խորհրդանշանի տեղադրման, տարրեր խորհրդանշական-զարդարական բնորոշ հատկանիշներով ուղեկցման, գծանկարի և մյուս վաղքրիստոնեական երկրների հուշարձաններում եղած պատկերման հետ նրա ունեցած կապերի ուսումնահիրությունը կրացահայտի բազմաթիվ բնորոշ հատկանիշներ հուշարձանների կառուցման ժամանակի և վայրի ճշտման համար:

Ուշադրություն է հրավիրում և այն, որ շրջանի մեջ ներգծած խաչը պատկերված

է եկեղեցիների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մասերում առանձին կամ էլ կոմպոզիցիայի մեջ (թոշուններով, տերեւլաքաններով, խաղողի վազով, եղինիներով և այլն), բնականաբար, գրավելով այնտեղ գերիշխող տեղ ոչ միայն երկրաշահական իմաստով, այլ նաև չափերով: Այն կարելի է տեսնել հիմնականում արևմտյան (Փարափի, Լեռնակերտ, Երերուպ, Քասախ) և արևելյան (Քասախ) մուտքերի բարավորների, ինչպես նաև Լեռնակերտի և այլ եկեղեցիների արևմտյան ճակատի զույգ լուսամուտների բարավորների վրա: Ուշագրավ է, որ այն կարելի է տեսնել արևելյան ճակատի ճակտոնապատի տակ, ճակատի սովորական որմնաբարի վրա (Հոհիսիմե): Այն երևում է նաև, ըստ երևույթին Զովունի եկեղեցու, շքամուտքի տերևաքանակված խոյակի վրա<sup>1</sup>: Այն պատկերված է նոյնակա Աղոստիի հուշարձանի պատվանդանի վրա: Եկեղեցու ներսում շրջանակի մեջ ներգծած խաչը կախրանի արսիդի եղունի վրա (Երերուպ, Փարափի և այլն) և հենապուների խոյակների բոլոր կողմերին (Քասախ), Զվարթնոցի, Պտղնիի և ուրիշ եկեղեցիների խոյակների որմնապարովյների միջև: Ուշագրավ է, որ ինչպես ներսում, այնպես էլ դրսում խաչը փորված է քարի մեջ կամ

Աերկված մուգ վարդագույն (Աշտարակ, Քասախ) <sup>2</sup>:


Նման պատկեր է նկատվում նաև քրիստոնյա Սրբելքի մյուս երկրներում <sup>3</sup>:

Տարօրինակ է թվում շրջանի մեջ Աերգծած խաչի առկայությունը Աղջի դամբարանի մուտքի վրա, ոեպի խաչը երկու կղոմերից գնացող եղջեկներով: Տարօրինակությունը կայանում է երանում, որ այդպիսի կոմպոզիցիան առկա է ոչ թե պատամունքային կառուցում, այլ հուշակառուցում: Դա, մեր տեսակետով, ունի բացառիկ կարևոր նշանակություն: Հնարավոր է, որ այն սկզբում եղել է եկեղեցի, իսկ հետագայում դարձել դամբարան (Դ. Դ.): Արտասովոր է նաև այն, որ կամարադեղի սպիտի (Ծառ երևույթին բարավորի մեծ սպիտի կտորտանքի) վրա նոյնական պատկերված է շրջանի մեջ ներգծած խաչ՝ թռչուններով, խաղողի ողկույզով և վարդակներով:

Խորհրդանշանի առկայությունը նշված տեղում հատուկ չէ հուշակառուցներին, այլ, ինչպես տեսանք, սովորական է պատամունքային շինությունների համար: Հատ երևույթին այդ կամարադեղի բարավորի սպիտը բերկված է եղել այստեղ որից կառուցից, ակնհայտորեն հյուսիսային կողմում գտնվող բազիլիկից: Սալիկի բաղկացուցիչ մասերը հիմք են տալիս մեզ կարծելու, որ այն Դ դարի վերջի—Ե դարի սկզբի ստեղծագործություն է:


Անկախ իրենց գտնված վայրից, Հայաստանի վաղ շրջանի հուշարձաններում շրջանի մեջ ներգծած խաչի բազմաթիվ օրինակները մեզ թույլ են տալիս համոզվելու, որ նրանք զարդարվում էին բոլոր հնարավոր խորհրդանշական և գեղարվեստական զարդերով: Այսպես, խաչելի լայնացող թների ծայրերը ավարտվում էին ուղղաբերությունուներով (Երերույք<sup>4</sup>, Կոշ<sup>5</sup> Անգեղակոթ<sup>6</sup>): Բացի այլ, ուղղաբերությունուներով տեղադրուված են նաև իրենց՝ լայնացող թների, շրջանում (Երերույք<sup>8</sup>, Քասախ, Դվին<sup>9</sup>, Ավան<sup>10</sup>, Կոշ, Արշահովիտ<sup>11</sup> և այլն)<sup>12</sup>: Մի փոքր ավելի լայն է ներկայացված զարդաբախչերի հաջորդաշարքը, որն օգտագործվել է խաչի թների միջև ընկած տարածությունները լցնելու համար, այստեղ հիմնականներն են թռչունները (Աղջ), օլովկները (Երերույք)<sup>13</sup>, վարդակները (Արշահովիտ<sup>14</sup>) (Ակ. 1): Աղյուս խաչի հորիզոնական թների վրա պատկերված են թռչուններ, իսկ նրանց տակ՝ վարդակներ: Այստեղ կարելի է տեսնել նաև նշտարիկներ, խաչի կենտրոնից ելնող խաղողի ողկույզներ (Քասախ), տերև-նշտարիկներ

(Երերույք) (Ակ. 2), կամ էլ եղևնաձև տերներ (Մանկանց<sup>15</sup>): Ծիծենավանքում խաչի թների միջև եղած տարածությունը գրադեցնում է կակաչաձև նկարը, որը շառավիղաձև տարածվում է խաչի կենտ-



Նկար 1

րոնից<sup>16</sup>: Զարդամոտիվների նշանակալից զանազանությամբ է աչքի ընկնում շրջանակը, որի մեջ Աերգծած է խաչը: Այսպես, հանդիպում են սովորական համակենտրոն շրջանակներ են կամ լայն եզրագծերով




Նկար 2

(Օծունի հուշայուն), երկշերտ շրջանակներ, որոնց միջև եղած տարածությունը գրադեցնում են ուղղաբերություն (Ակ. 3), զարդաքունիքը (Մաստարա և այլն<sup>20</sup>), կեռագծերը (Գողակ<sup>21</sup>, Գառնահովիտ և այլն)<sup>22</sup>: Տերևաքանդակով է կատարված Դվինի խաչի շրջանակը<sup>23</sup>: Գդալանման զարդանախություններում, իսկ նշտարաձև՝ Քասախություն և Զվարթնոցում<sup>24</sup>:

Մեր տրամադրության տակ եղած հյու-

թը հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն վերլուծել խաչերի տեսակները, կառուցման ձևը և այն ամենը, ինչ որ մեզ հնարավորություն կտա պարզորդ ներկայացնել զարգացման ուղիները, լուրահատ-



Նկար 8

կությունները, և Հայաստանի վաղմիջնադարյան հուշարձանների այդ խորհրդանշական-զարդանախչական նշանակություն ունեցող մոտիվի կատարման ժամանակը:

Ամենից առաջ ուշադրություն է գրավում հավասարացր թներով ամենատարատեսակ խաչերի առկայությունը. սեպածն (հարթ՝ Սոցում, տաշտակած՝ Էջմիածնում): Նույնը՝ յայնացող ծայրերով (տաշտակածն շերտափոր եղբերով՝ Գողպ)՝<sup>25</sup>, ինչպես նաև շեղագիծ՝ միմյանց ուղղահայաց շրջանների միահյուսումից առաջացած (Զվարթնոց և բազմաթիվ այլ): Այսուհետերձ, եթե Աղջի և Էջմիածնի օրինակներում խաչարելվերի ծայրերը վերջանում են ուղիղ, ապա Զվարթնոցի և ավելի վաղ (Ծրերով և այլն) հուշարձաններին՝ կորագծերով: Հետաքրքիր է, որ խաչի վերջին պատկերը ծնունդ տվեց նաև նրա քանակման նոր եղանակին: Այս դեպքում խաչի եղբերի հարթությունները թերութամբ են կատարվում: Աղջի, Էջմիածնի խաչերի օրինակներում աչք է զարնում եղբերը և ապա այն, որ խաչի վերին հորիզոնական թևի աջ կողմի ծայրին Ակատելի է նշան՝ նման հարցականի: Հայտնաբերելով լատիներեն «S» տառին մոտ այդպիսի նշաններ Քասախի արևմտյան մուտքի բարակորի խաչի նոյն տեղում՝ Ա. Սահինյանը գրել է, որ դա «Sanctus»՝ «Սուրբ»<sup>26</sup> բառի առաջին տառըն է:

Վերոհիշյալից բխում է, որ մեր առջև է շրջանի մեջ ներգծած խաչի երկու, բացահայտորեն միմյանցից տարբերվող տեսակներ, ինչպես նետո կտեսնենք, երկու հայրենիք ունեցող, ընդ որում երկրորդը արյունակից է առաջինին: Իրակեն անհրաժեշտություն չկա ապացուցելու, որ շրջանի մեջ խաչի տեղադրումը եկել է փոխարինելու կայսրերի և բարձրաստիճան այլ անձանց անտիկ շրջանի դիմանկարներին: Քրիստոնեական ժամանակաշրջանում շրջանի մեջ տեղադրում էին Սատվածածնի, Քրիստոսի պատկերը և, ինչպես անտիկ շրջանում, շրջանը պահպամ էր թեավոր հրեշտակներով՝ հանձնարերով: Այս տվյալությունը գոյություն ուներ նաև Հայաստանում, ինչը որ հաստատում է այն հորինվածքը, որ երևում է Պողօնի հարավային լուսամուտախորշի կենտրոնական մասում, Սաստարայի ավանդատների բարավորներին<sup>27</sup>:

Այդ հայրենիքները կրացահայտվեն, երբ դիտարկվեն այն երկրներն ու վայրերը, որտեղ օգտագործվել են այդ տիպի՝ շրջանի մեջ ներգծած, խաչերը: Այսպիսով, Աղջի և Էջմիածնի խաչերը, իրենց բաղկացուցիչ տարրերով՝ պայմանական «S» տառի տեսքով, ծագում են, ինչպես մեզ է թվում, երեք ճաղերով պատկե օղակից, որը հանդիսանում է եկեղեցիների դոների և քարաղաջանների վրա<sup>28</sup>: Սրանով իր վրա ուշադրություն է հրավիրում այն, որ բոլոր երեք օրինակների վրա հանդիպում է հիշված լատինական տառը և, ինչ որ հետաքրքրական է, այդ տառ-նշանը տեղադրությամբ է նոյնպես աջ կողմում, ինչպես որ կա մեր համար օրինակներում: Սրա հետ միասին, ըստ մեր տեսակետի Էջմիածնի և Քասախի խաչերը արտահայտված են խաչի տաշտածն թներով և ուլունքների, ինչպես նաև խաչի առաջքի օղակների առկայությամբ (Քասախ): Մենք ենթադրում ենք, որ Էջմիածնի խաչերում խաչաձևկել են երկու սկզբունքներ՝ արևելյան և արևմտյան:

Ինչ վերաբերում է խաչի ձևին, որ կազմված է չորս միմյանց ուղղահայաց կիսաշրջանների միահյուսումից, ապա այն, անպարհան արևելյան ծագում ունի: Սուածին անգամ մենք այն տեսանք Սիրիայում (Եղար. Էլ Աղերին, Քասր իրն Վարդան, Զերեդ և այլն):<sup>29</sup>

Բնորոշ է, որ սիրիական օրինակներից ոչ մեկի վրա մենք չենք հանդիպել «S»-ճն նշան-տառ: Պակաս նետաքրքրական չէ և այն, որ Քասր իրն Վարդանում կա ճաղերով պատկե-օղակը (առանց թեավոր

իրեշտակների), այստեղ վերին և ներքին ուղղահայաց առանցքների կողքերին կան ուղութեաներ, իսկ մենա կենտրոնում, որտեղ հատվում են ճաղերը, պատկերված է օդակ, ինչ որ տեսնում ենք բազմաթիվ օրինակների վրա: Նոյնան են նաև կիսաշրջանի ձևով կտրված ճաղերի ծայրերը: Սիրիական օրինակներում տեսնում ենք (ինչպես և պետք է լինի) քրիստոնեական Արևոտքի խաչի կամ ճաղերով օղակնակների յուրահատկությունների անդրադառությունը: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ Զվարթնոցի, իսկ հնարավոր է նաև ավելի վաղ շրջանի հուշարձանների վրայի խաչի այս ձևը արդյունք է Սիրիայի հետ ունեցած հաղորդակցության և նրա հայտնվելը Հայաստանի վաղքրիստոնեական ճարտարապետության մեջ պետք է դիտարկվի Զվարթնոցի հետ կապված:

Եզրափակման մեջ կարելի է ասել, որ շրջանի մեջ ներգծած խաչի մոտիվը Հայաստանում քրիստոնեության արշալույսին և նրա ճարտարապետության վաղ շրջանի զարգացման ժամանակ, ինչպես և ենթադրվում էր, լայն տարածում է գտնում եկեղեցների ինչպես ներսում, այնպես էլ դրասում: Նրա նշանակությունը պայմանավորված է խաչին գեղագիտական տեսք տալու ձգտմամբ և դրա համար այն ներկայանում է տարբեր կիսազարդական, կիսախորհրդանշական բնույթով:

Շրջանի մեջ ներգծած խաչի տեսակների լուծման մեջ կա երկու բացահայտ զարգացում, առաջին՝ դեպի արևմուտք ձգտող, բայց իր մեջ արևելյան յուրահատկություններ բովանդակող (Զվարթնոց և այլն): Այսպիսով, եկեղեցու այս ամենից, մենք իրավունք ունենք արտահայտելու մեր մըտքերը Աղջի խաչերի երևան գալու ժամանակի վերաբերյալ՝ հավանաբար 4—5 դդ., Էջմիածին 4—5 դդ.<sup>10</sup>, Քասախ՝ 5—7 դդ.<sup>11</sup>, Զվարթնոց՝ 7-րդ դար:

Ենթադրում ենք, որ Զվարթնոցի խաչի ձևը կարող էր Հայաստանում հայտնվել ավելի վաղ՝ 6-րդ դար (Եղվարդ և այլն):

#### ՄԱՆՈՒՄԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Francesco Gandolfo, Chiese e capelle armene a navate semplice dal IV al VII secolo, Roma, 1973, photo 112.
2. Ա. Սահման, Քասախի բաղիկայի ճարտարապետություն: Երևան, 1955 թ., էջ 52:
3. Շրջանակի մեջ ներգծած խաչը, բաղկացած փոխողահայաց շրջանակներից, տեսնում ենք Սիրիայում (Տուրմանինի նկանցու ճակտոնաբարավորի վրա: Տես Anton Springer, Früch,

christliche Kunst und Mit'elalter, Stuttgart', էջ 9, լուսանկար 8: Ի Անդերին և Զերու կիւնցիների (Ե դար) նարավային ճակտոնամտոքի բարավորի վրա: Տես Buttli ռ. Horward Gresly Early churches in Syria, Leyden, 1907, լուսանկար 88, 86: Փոքր Սահման՝ Բինթիրքիլիսայի բազիկայի բարավորի վրա: Տես Anton Springer, Վերմիջազ աշխ., էջ 18, լուսանկար 16 և այլն: Վրաստանում այն պատկերված է ինչպես առանձին, այնպէս էլ կոմպոզիցիայով: Բնած երկու հրեշտակներով, նա նաև նույն է գալիս Զվարթի նարավային մոտքի նարավ-արևմույսի ավանդառան մոտքի վրա: Տես Կհիկված Մ. Ա., Արհետկուրա Ջկվար, Մ., 1940, ս. 42, 51, բա. 20, 80: Շրջանակը խաչով և եղանակներով, մեկական կամացած շրջանակի ձախ և աջ կողմերից, ըստ երևույթին, պատկերված է Այսին Սիրիա բարավորի վրա: Տես Յ. հերիձ, Ճրեւերգըննական արհետկուրա Երևան, 1974, բա. 36 (Վարդ Ղեղվում): Ինքը խաչը չի նկատվում, բայց ըստ զոգորդության ուրիշների մետ նրա ներկայացնելու ակնհայտ է:

4. Միազանյան Ս. Խ., Ճարտիւ, Մ., 1971, ս. 44, բա. 21/14:
5. Վահագն Գրիգորյան, Հայաստանի վաղմիջնադարյան կենտրոնագրեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 145, այլուսակ ԽI/3:
6. Ս. Չամիզյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX—XIII դարերի խաչքարերը, Երևան, 1984, այլուսակ 14:
7. Նոյնը կարելի է տեսնել Զվարի արևմույս մոտքի խաչի վրա: Տես Կհիկված Մ. Աշխ. աշխ.:
8. Ս. Խ. Մացականյան, Աշվ. աշխ., էջ 44, լուսանկար 21/14:
9. Վ. Հարությունյան, Դիմին ԽV—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 66, լուսանկար 16:
10. Francesco Gandolfo, Աշվ. աշխ., լուսանկար 89:
11. Գրիգորյան Յ., Աշվ. աշխ., էջ 145, այլուսակ 21/3, 4:
12. Ուղուցները նաև նույն նույնական և Գլայթաշիում (Ե—Զ դդ.): Տես Կիբուանիլի, Խանձրի, Երևան, 1972, այլուսակ 40:
13. Mapp H. Յ., Երեւանի բազիլիկ, Երևան, 1968, այլուսակ VI:
14. Գրիգորյան Յ., Աշվ. աշխ., այլուսակ 21/4:
15. Միազանյան Ս. Խ., Աշվ. աշխ., էջ 44, լուսանկար 21/24:
16. Եղանակն տերմները պատրաստված են Բուղակի Սիրման Ե դարում: Տես Կիբուանիլի Հ., Աշվ. աշխ., այլուսակ 32:
17. Վահագն Գրիգորյան, Աշվ. աշխ., այլուսակ 21/1:
18. Մ. Ս. Հասրաթյան, Միջնամավանք, Պատմաբանահրական հանդիս, 1980, նո 2, էջ 48: Կակաչը բացված ճաղկաթերթերով պատկերված

- է Կաշաղամիի խաչի վրա (Վրաստան), Թրիլիսի արվեստների թանգարանում: Tania Velimans. L'image de la Deltis dans les églises de la Géorgie et dans le reste du monde byzantine. „Cahiers archéologiques“ 31, Paris, 1988, էջ 180, Ակար I:
19. Թորոս Թորամանյան, Ազգ. աշխ., 2-րդ հատոր, էջ 157:
20. Ուշագրավ է, որ կիմի մոտիվը տեսել ենք Վրացական օրինակներում (Կվեմո-Քարքիի Սամցերիսիլում), տես Կյանահանուլի Հ., Ազգ. աշխ., աղյուսակ 26: Անրուստի, տես Ենոքածու Յ., Ազգ. աշխ., լուսանկար 15: Խօնիք-Ըստ Շոն տես Կյանահանուլի Հ., Ազգ. աշխ., աղյուսակ 32:
21. Բոլցիսի Սինելի շրջանակը ձևավորված է կրուպադերի կրկնակի շարքով: Տես Կյանահանուլի Հ., Ազգ. աշխ., աղյուսակ 311:
22. Գ. Ս. Չախկիան, Վաղմիջնադարյան երկր Բուշաբաններ, Պատմա-բանափրական հանդես, 4 (87), 1979, էջ 263, աղյուսակ 11/2:
23. Վ. Հարությունյան, Ազգ. աշխ., էջ 66, պատկեր 16:
24. Մեր ուսումնափրության սահմաններից դուրս են շրջանակների օրինակները, որոնց տակից աճում են տարբեր շերտավոր աղեղներ, կիմեր, երեք կամ բազմամաս (պատկառթեթքային) մոտիվները և այլն:
25. Լևոն Ազարյան, Վաղ-միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, պատկեր 80:
26. Ա. Սահմանյան, Ազգ. աշխ., էջ 187. Հեղինակը իրավացի համարում է, որ այս հշանքը ոչ հագ-

վագյուտ պատկերված է վաղ-բրիստոնեական նուշարձանների մեջ: Այս կարծիքի մետ կարելի է համաձայնվել, եթե հաշվի առնենք, որ մի շարք օրինակներում խաչքարերի արձանագրությունները մկանում են «Սորք խաչ...» բանելով:

27. Նոյն պատկերը գտնվում է Էջմիածնի ավետարանի կազմի վրա 6—7-րդ դր., տես Դեկորատիվ և էկուսցո սրբագրությունը (Արմենիա, Լ. շ. 117 (պատկեր 40)): Նոյնն էլ կարելի է տեսնել Զվարինոմ մեկ շրջանակի վրա հանդիս է զայիս խաչ, բաղկացած փոխուղղահայաց չորս միահյուսված կիսաշրջանակներից, իսկ մյուսում՝ ըստ երևույթին, խաչ կամ Սասվածամոր պատկերը: Տես Կռնաձե Մ. Ա., Ազգ. աշխ., էջ 51, պատկ. 80, էջ 42, պատկ. 20:
28. Պուշկինի անձան թանգարան Մոսկվայում: Քարտադաղը թվագրված է Գ. դարում: Նոյն ող-պսակի ծնը, բունծ յեւպիր նրեշտակներով, գտնվում է Ս. Ամբրոսիոսի եկեղեցու դրան վրա Միհանում (5-րդ դ.) և այսպիս կոչված Վահենտինու 8-րդ քարտադաղի վրա Ռուզեն-Շայում: Տես Anton Springer Ազգ. աշխ., էջ 47, պատկ. 54:
29. Buttler, Norward Cresley, Ազգ. աշխ., պատկ. 86, 88, էջ 191:
30. Բարկեն Առաքելյան, Հայկական պատկերաբանակները 5—7-րդ դարերում, Երևան, 1949:
31. Առաքելյան Ե., Առյուն տեղում, էջ 84: Ս. Սահմանյան, Ազգ. աշխ., էջ 188:

